Երևանի քաղաքապետ՝
**Հ.Մարությանին**

## ԴԻՄՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 21-ին՝ ժամը 12$^{00}$-ից մինչև 17$^{00}$-ն ընկած ժամանակահատվածում, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱ կազմակերպության վարչական շենքի արտաքին տարածքում «Հանուն Հանրապետության» քաղաքական նախաձեռնությունը՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 2-րդ գլխի պահանջների պահպանմամբ, նախատեսում է կազմակերպել «Միություն Հանուն Հանրապետության» կուսակցության հիմնադիր համագումարը:

Սեպտեմբերի 21-ին նախորդող օրերին՝ 19-ին և 20-ին, ծրագրվում է իրականացնել նախապատրաստական աշխատանքներ:

Վերոգրյալը հայտնելով՝ հայցում ենք Ձեր թույլտվությունը հիմնադիր համագումարի և դրա կազմակերպչական աշխատանքների կատարումը «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱ կազմակերպության վարչական շենքի արտաքին տարածքում իրականացնելու վերաբերությամբ:

Հանուն Հանրապետության քաղաքական նախաձեռնության անդամ՝

**Հայկ Այվազյան**

096 11 22 30

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
No